

առ զուժկանօք Տապանակին զերուժեամբ եւ նուքն այլ արանց լինէին: Տեղեկացեալ եմ զգեղ վայելչուժեան նախաստեղծին խնդրելոյ Դաւթի ապստամբելն Աբիսողոմայ վրիժամահուն, հարեալ ի ծնողական գըթուժենէն՝ զողբերգանս կրկնակի յիշմամբ զանուն բարբառեալ եւ Սողոմոնիւ սփոփեցաւ: Գիտեմ որ վասն աստուած պաշտուժեան երանուհւոյն Շամունէի ջատագովութիւն համբերութեան՝ առաջի աչաց նորա զեօթն որդիս չարչարանօք մահացուցեալ: Ընթերցեալ եմ զՀեթմոյ ծերի սուգ վասն Թորոսի պատահալ մարտին՝ զարիւնաներկութիւն առաթուր զլորմամբ եւ զԼեւոնի գերութիւն եւ զ'ի յեզիպտական ծառայութենէն ողջամբ ընկալեալ՝ ի գահում իւրում թագաւորեցուցեալ մխիթարեցաւ:

Զի՞նչ օրինակք այսօքիկ ի ծայր կենաց թշուառականիս՝ տեսեալ առաջի աչաց ա'յնքան եւ ընդդմակին պատահմամբ վախճան մանկամեռ, զոր աստանոր ի մտաբերութիւնս իմ ձեռք իմ թուլանան եւ սիրտ իմ իւրովք զօրօք խռովեալ անա նուաղին: Եւ եթէ առական Ալիսանտրի որ ի Բաբելոնէ գուժն ծանրացեալ յաշխարհի, բայց թեթեւ սուրհանդակօք արագ ժամանէր առ Օլոմպիա յաճախագոյն խղճիւ, որ խկոյն սրացեալ անձամբ ի վեր սլանայր, ներկէր ըստ սրտին սեւացելոյ զզարդարանս ապարանից թագաւորին համակ արջնապատեալս ծածկոցաւ եւ փռուածոց, եւ զնաժիշտս եւ զօրիորդացն երգողաց զոսկէհոռիւք պըճնացեալսն՝ թխազգեացս լինել ստիպէր եւ զերգողաց երամոց ձայնս ի նուագս աշխարանաց փոխարկեալ՝ պա'ր պա'ր զնոսս հանել յարկացն որգւոյն, եւ որպէս զօրէն լալականաց ի սենեկէ թնդաբեր սրտից տալին գղրգմունս ի գահարան քաղաքիս Մակեդոնացուց, եւ ընդ հրապարակօքն ընթանալն ի վայրս շահանի կեօրըստանի՝ լի լինէր բօթն Աղեքսանդրի վազամեռին: